«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՀովհաննես Թումանյանի քառյակները

ԱՌԱՐԿԱ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Սիրանուշ Թումասյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Խորոնքի միջն. դպրոց>> ՊՈԱԿ

Ներածություն

Հովհաննես Թումանյանը յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ ապրում է որպես ամենայն հայոց բանաստեղծ։ Ավետիք Իսահակյանի բնորոշմամբ՝ մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի զոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել։ Թումանյանը միշտ եղել է իր ժողովրդի հետ, ապրել է իր ժողովրդի ողբերգական ներկայով, երազել է նրա պայծառ ապագայի մասին։ Թումանյանը հայի ու հայկականության խորհրդանիշն է, հայի ինքնաճանաչումը։ Դժվար է պատկերացնել հայ մարդու հոգևոր աշխարհը առանց Թումանյանի։ Չի գտնվի մեկ հայ, որը ծանոթ չլինի նրա ստեղծագործությանը, որը առօրյա խոսքի ու զրույցի մեջ, ուրախության կամ տրտմության ժամին չհիշի նրան, պատեհ առիթով մեջ չբերի նրա մի որևէ քառյակը կամ մի դարձվածք նրա գրվածքներից։ Թումանյանը միշտ հայ մարդու շուրթերին է։ Բանաստեղծի խոսքը երբեք չի հնանում և ժամանակավրեպ չի դառնում, քանի որ նրա ստեղծագործությունները հայելու նման անդրադարձնում են մեր կյանքը՝ երեկ և այսօր։ Թումանյանի նման գրողների առջև ժամանակը ծունկի է գալիս։ Նա պատկանում է այն հանճարեղ գրողների շարքին, որոնց ուժը ազգայինի և համամարդկայինի ներդաշնակ միասնության մեջ է։

Թումանյանը թողել է հարուստ գրական ժառանգություն։ Այդ բազմաթիվ ստեղծագործությունների մեջ քառյակներն ունեն իրենց պատվավոր տեղը։ Յուրաքանչյուր քառյակ մի ուրույն աշխարհ է։ Թումանյանի քառյակները գեղարվեստական բարդ երևույթներ են։ Իրենց գեղարվեստականությամբ, դասականության մակարդակով Թումանյանի քառյակները հայ քառյակագրության բարձրակետն են, ինչպես և առհասարակ հայ բազմադարյան բանաստեղծության ամենաթանկագին գանձերից։

Թումանյանը ամբողջացնում է աշխարհից ստացած իր տպավորությունները, հասարակության և բնության մասին կուտակած խոհերը, սեփական կենսափորձը։ Այս կենսական և խոհական հարստությունից էլ ծնվում են հանճարեղ քառյակները։

Թումանյանի քառյակները

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը ասել է. « Քառյակները շատ ուժեղ շտրիխներ են, դրանք իմ հոգու կենսագրությունն են »։

Հովհ. Թումանյանը քառյակի ձևով խոսել է 1890 թվականին գրած « Հառաչանք » պոեմում հանդես եկող ծերունու մտորումների մեջ՝ «Անց կացա՛ն…»,

«Վերջացա՛վ…», բայց հետագայում դրանք հանել է պոեմի բնագրից և միացրել քառյակների շարքին։ Թումանյանն իր քառյակները գրել է հիմնականում կյանքի վերջին տարիներին՝ 1916 – 1922 թվականներին։ Նրա քառյակները բազմազան են թե՛ մոտիվներով և թե՛ թեմատիկ ուղղվածությամբ։ Դրանք նվիրված են կյանքի ու մահվան, անցողիկի ու մնայունի, հայրենիքի, բնության, մարդկային կյանքի փիլիսոփայության տարբեր հարցերի։

Իր զրույցներում Հովհաննես Թումանյանը հաճախ էր ասում, որ քառյակները Արևելքի պոեզիայի զարդն են և ունեն համաշխարհային մեծ խորհուրդ։ Թումանյանը հմայված էր Արևելքի մշակութային վիթխարի հարստությամբ։ Սիրում էր Արևելքի մեծ բանաստեղծներին՝ Ֆիրդուսուն, Խայամին, Նիզամուն, Խաքանուն, Սաադիին, գերվել է հնդկական փիլիսոփայությամբ։ Կյանքի վերջերին, երբ արդեն հիվանդ էր ու անհանգիստ, թարգմանել է Խաքանուց վեց իմաստուն քառյակ։ Իսկ Օմար Խայամին Թումանյանը համարում էր հազվագյուտ բանաստեղծ, քանի որ քիչ բանաստեղծներ կան, որոնց միտքն ու սիրտը իրար ներդաշնակ են, որ կյանքի փիլիսոփայություններն ու բանաստեղծությունը այդքան միաձուլված են։

Թումանյանը, հենվելով Արևելքի մեծ բանաստեղծների թողած հարուստ ժառանգությանը, նոր ուղի է բացում քառյակի պատմության մեջ։

Հովհաննես Թումանյանի քառյակների տաղաչափությունը

Քառյակը չորս տողից կազմված բանաստեղծություն է։ Այն թեև բաղկացած է ընդամենը չորս տողից, բայց ունի իմաստային, փիլիսոփայական, զգացմունքային շատ մեծ խտացում և ընթերցողի վրա արագ ու կտրուկ ներգործելու շատ հզոր ուժ։

Քառյակների մեջ հիմնականում տարածված է հանգավորման աաբա ձևը, երբ հանգավորվում են 1-ին, 2-րդ և 4-րդ տողերը, իսկ երրորդ տողը մնում է ազատ՝ չհանգավորված։ Հանդիպում են նաև հանգավորման այլ տարբերակներ. խաչաձև՝ աբաբ, կից՝ աաբբ, անընդմեջ՝ աաաա։

Հանգերի ձևավորման տեսակետից Թումանյանը հավատարիմ է մնացել արևելյան–դասական քառյակի կառուցվածքին։ Դասական քառյակը հանգի ձևավորման երկու գլխավոր տեսակ ունի. ա) երբ իբրև հանգակազմիչ հանդես են գալիս տողավերջի տարբեր բառեր, որոնք կամ համանուններ են լինում և կամ վերջին մեկական, երկուական վանկերի համապատասխանություն են ունենում բ) երբ հանգերը կազմված են միևնույն բառի, բառակապակցության, երբեմն էլ՝ խոսքի կրկնությամբ։ Թումանյանը հանգի ձևավորման այս երկու տեսակն էլ օգտագործել է, այն էլ նկատելի բազմազանությամբ։

Վանկային հանգի օրինակ.

Իմ սու՜ր, արթուն ականջում

Մի խոր ձեն է միշտ հնչում,

Անհու՜ն, անքու՜ն կարոտով

Իրեն մոտ է ինձ կանչում։

Բերենք բառակրկնությամբ կամ խոսքակրկնությամբ ձևավորված հանգերի օրինակ.

Առատ, անհատ՝ Աստծու նման՝ միշտ տեղալուց

հոգնել եմ ես.

Հոգիս ծարավ՝ սրան-նրան մտիկ տալուց

հոգնել եմ ես.

Մինը պիտի գար իմ դեմը՝ ճոխ ու շռայլ

անհաշիվ,

Ամեն ճամփում սպասելուց ու փնտրելուց

հոգնել եմ ես։

Մինչև 1918 թվականը գրված քառյակներում բացարձակորեն գերիշխում է 7 վանկանի տողաչափը՝ 4+3 կառուցվածքով։ Այսինքն այն չափը, որը արևելքի պոեզիայում ավանդաբար կապված է եղել բայաթիի ժանրային ձևի հետ։ Այդ չափն է կիրառված նաև Խաչատուր Աբովյանի բայաթիներում։ 1919 թվականից սկսած նախապատվությունը ակնհայտորեն տրվում է 15 վանկանի տողաչափին։ 7 վանկանի քառյակներում գերիշխում են անձնական վշտի ու կարոտի մոտիվները, որը հեղինակը հասցրել է գեղարվեստական ընդհանրացման բարձր աստիճանի։ 15 վանկանի տողաչափը ներդաշնակում է քառյակների խոհափիլիսոփայական բովանդակությանը, համամարդկային և տիեզերական խոհերին։

Արևելյան դասական քառյակների մի առանձնահատկությունն էլ այն է, որ նրանց լեզուն, համեմատած բանաստեղծական այլ ձևերի հետ, մոտ է ժողովրդի կենդանի խոսքին։ Թումանյանը այս դեպքում ևս հավատարիմ է դասական քառյակագրությանը։ Սակայն ասենք, որ Թումանյանի մյուս ստեղծագործությունների լեզուն ևս մոտ է ժողովրդի կենդանի լեզվին։ <<Խոսքեր ու ձևեր կան,- ասել է Թումանյանը,- որ իրենց մեջ ամբողջ պատմություն են պարունակում։ Էդ տեսակ խոսքերը միայն հանճարները կարող են գտնել, մին էլ ժողովուրդները, որ հազար-հազար խելքերով երկար տարիների ընթացքում նայում, լսում, քննում ու դատում են կյանքը ու վերջը հանում մի կարճ եզրակացություն, իրենց որոշումը արտահայտում մի բացականչությամբ, մի ածականով կամ մի դարձվածքով>>։ Թումանյանը մի ուրիշ առիթով նկատել է, թե բանաստեղծի համար բառը մի աշխարհ է։

Թումանյանի քառյակների բովանդակությունը

Ի՞նչ տվյալներ են հարկավոր քառյակագիր դառնալու համար։ Շատ տաղանդավոր մարդիկ գրել են քառյակներ, սակայն նրանց ստեղծագործությունները այդպես էլ չեն դարձել գեղարվեստական հայտնագործություն։ Թումանյանը նույնիսկ ասել է, որ քառյակներ գրելը համաճարակ է դարձել։ Այդ քառյակները փայլփլուն քարեր են, ոչ գոհարներ։ Քառյակ գրելու համար կարևոր են ստեղծագործական ձիրքը,

տարիների հրդեհի մեջ բովված խոհերը, հոգեկան ու կենսական գերհագեցվածությունը՝ կապված անհատական և ընդհանրապես մարդկության բարդ ճանապարհի հետ։ Թումանյանը ուներ այդ ամենը։

Հայ գրողներից քառյակներ գրել են նաև Խաչատուր Աբովյանը, Վահան Տերյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Եղիշե Չարենցը, Հովհաննես Շիրազը և ուրիշներ։

Քառյակների արարման ժամանակով ստեղծագործական մի նոր շրջան է սկսվում Հովհաննես Թումանյանի ստեղծագործական կյանքում, որը, ավաղ, շարունակություն չունեցավ բանաստեղծի վաղաժամ մահվան պատճառով։ Թումանյանը գրել է ընդամենը 62 քառյակ, որոնք դարձան նրա հոգևոր և բանաստեղծական որոնումների յուրօրինակ հանրագումարը, նրա ստեղծագործական ուղու վերջին փայլուն էջը։ Քառյակների ստեղծմանը Թումանյանը նախապատրաստվել էր իր գրական զարգացման ողջ նախորդ փորձով՝ և՛ աշխարհի ու մարդու մասին խոր ու ինքնատիպ փիլիսոփայական մտորումներով, և՛ մեկ բառի, տողի մեջ անսահմանորեն լայն բովանդակություն արտահայտելու մշտական ձգտումով։ Թումանյանի քառյակները շատ չեն, դրանք սովորական հորինվածքներ չեն և չեն կարող ստեղծվել ամեն պահի։ Քառյակները քամված են կյանքից, փորձից, անհատական և հասարակական տառապանքից։ Պատահական չէ, որ քառյակներն ստեղծվել են 1916-1922 թվականներին։

1915 թվականի եղեռնից արյունաքամ եղած հայ ժողովուրդը հոգեվարքի մեջ էր։ Աշխարհի քարտեզից ջնջվում էր Հայաստան անունը։ Բանաստեղծը ապշահար էր մարդ արարածի դաժանության տված ցավերից և աշխարհի անգթությունից։ Աստված կարծես անտեր էր թողել աշխարհը, և մարդիկ աստվածաստեղծ աշխարհը դարձրել էին կատարյալ գեհեն։ Թումանյանը շտապեց Վան, իսկ հուլիս և օգոստոս ամիսներին արդեն գործում էր Էջմիածնում, ուր Արևմտյան Հայաստանից եկել և ծովացել էր հայրենազուրկ հայ ժողովուրդը։ Բանաստեղծը փորձում էր դիմադրել աղետներին, օգնել համաճարակի և քաղցի բերանն ընկած գաղթականներին, պաշտպան կանգնել սովամահ մանուկներին։ Հայրենիքի կորուստն ու հարազատ ժողովրդի անհատնելի տառապանքը ալեկոծում էին բանաստեղծ որդու ներքին աշխարհը։ «Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ականատես եմ ես։ Բոլոր

ճանապարհները, բոլոր շինությունները, բոլոր բնակությունների շուրջը, հանդերը լիքն են մերկերով, քաղցածներով, հիվանդներով, լացողներով, տնքացողներով, մեռելներով։ Երեխանե՛ր, երեխանե՛ր, երեխանե՛ր …անտեր, սոված, հիվանդ։»[1]

Այս ամենին զումարվեցին նաև Թումանյանի անձնական կորուստներն ու տառապանքները։ Սպանվեցին Թումանյանի եղբայրներն ու որդին։ 1915 թվականին սպանվեց Ռոստոմը՝ Լոռիում, իսկ 1916 թ. Արտաշեսը՝ ռազմաճակատում։ 1918 թ. Թումանյանը ապրում է մի մեծ ողբերգություն։ Պատերազմի դաշտում զավակներից Արտիկը(Արտավազդը), որ կամավոր զինվոր էր, Արևմտյան Հայաստանում անհետ կորչում է։ Թերթերից պարզվում է, որ Թումանյանի 24-ամյա որդին զոհվել է քրդերի ձեռքով՝ Բեջարից Համադան տանող ճանապարհի վրա։

Քառյակի ժանրում մեծ նվաճումների կարող էր հասնել միայն կյանքի բարդ ճանապարհ անցած բանաստեղծ-քաղաքացին։ Թումանյանը հոգու տառապանքն ու մտքում ամբարված խոհերն արտահայտելու համար անցավ քառյակի ինքնատիպ ու բարդ տեսակին։ Թումանյանը խոստովանել է, որ քառյակների մեծ մասը ինքը գրել է աշնան և ձմռան ամիսներին, երբ սենյակում միայնակ փակվել է, նստել է վառարանի մոտ և հանձնվել ինքնազննման։ Թումանյանը իր քառյակները թեմատիկ շարքերի չի բաժանել, այլ գրել է խառը կարգով։ Բանաստեղծը անդրադարձել է իր ժամանակի կյանքի և ընդհանրապես մարդկային կեցության բազմազան կողմերին, բայց դրանք միշտ չէ որ հստակորեն սահմանազատվում են։ Միևնույն քառյակի մեջ հաճախ միաձուլվում են տարբեր մոտիվներ։

Կյանքի ու մահվան հավերժական գաղտնիքների մասին խոսելիս Թումանյանը որոշ հարցերում հարազատ է մնում Խայամին, Խաքանուն, Հաֆիզին, սակայն շատ առանցքային հարցերում Թումանյանը նաև շեղվում է մեծ նախորդներից։ Այսպես, օրինակ, Թումանյանը փոքր տեղ է տալիս կնոջ, սիրո, գինու և վայելքի թեմաներին։ Գաղտնիքը Թումանյանի կենսագրության մեջ է։ Մենք արդեն խոսել ենք բանաստեղծի անձնական կորուստների, հայրենիքի մի մասի կորստի ու հայ ժողովրդի տառապանքների մասին։ Նա իր վրա է վերցնում ոչ միայն անհատական, այլ նաև

---

[1]Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, 1985 թ., հ. 2, էջ 513

հայրենիքի ճակատագրի ողջ ծանրությունը: Կարելի է ասել, որ Թումանյանը նոր ուղի է բացում քառյակի պատմության մեջ: Թումանյանի քառյակներում հայրենիքը դառնում է ծանրության կենտրոն: Չէ՞ որ այդ արատավոր ժամանակաշրջանում փակվում էին ժողովուրդների ու մարդկանց անգամ ֆիզիկական գոյության բոլոր ճանապարհները: Իսահակյանին ուղղված նամակներից մեկում Թումանյանը սրտի կսկիծով ու հոգու մեծ ցավով է խոսում հայրենիքի թշվառ վիճակի մասին: «Կգաս, կտեսնես մեր աշխարհքը ավերված, մեր ժողովուրդը կոտորված, կենդանի մնացածն էլ կոտրված, ջարդված, մեր հարազատների ու ընկերների շրջանները նոսրացած: Կտեսնես թե աշխարհքի էս ծով վշտից ինչ ահագին բաժին է ընկել առանձնապես ինձ ու քեզ»:[2]

Բանաստեղծը միշտ բարձրանում է սեփական ցավի անմիջական ազդեցությունից: Անձնական վշտի և շրջապատի մարդկանց տառապանքի միասնության գիտակցությունը օգնում է գնալու դեպի մեծ ընդհանրացումներ: Բանաստեղծը իր սրտի մեջ զգում է հանրության, ժողովրդի վշտերի ամբողջ ծանրությունն ու խորությունը:

Ամեն մի սիրտ ցավով լըցվեց մեր դարում,

Ցավոտ սըրտով աշխարհ լըցվեց մեր դարում.

Ցավոտ աշխարհքն եկավ լըցվեց բովանդակ

Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

Թումանյանը ապրել ու ստեղծագործել է իր ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանում: Կյանքի ու մահվան, մարդու առօրեական ու տիեզերական էության, հավերժի ու անցողիկի շուրջ խորհող բանաստեղծը մղկտացող սրտով կապված էր տանջահար ժողովրդի ու բզկտված հայրենիքի հետ: Պատմության ողբերգական դեպքերը, հետո նաև ծանր հիվանդությունը հնարավորություն չէին տալիս բանաստեղծին լիարժեք զբաղվել ստեղծագործական աշխատանքով:

---

[2]Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, 1985 թ., հ. 2, էջ 520

<< Ինչքա՛ն քառյակ կգրեի էս երկու տարում, ինչքա՛ն բան կանեի… խանգարեցին, չթողեցին մարդ իր գործով կենա, երկու՛ տարի կորցրի, երկու՛տարի իմ կյանքից

հանվեց… Ինչ եմ գրել մինչև հիմա, մի քանի տող բան, էն էլ ձեռաց, ոտի վրա, ի միջի այլոց և կամ հիվանդ ժամանակ>>:[3] Տեսնում ենք, թե ինչքան պահանջկոտ է Թումանյանը ինքն իր հանդեպ, չնայած որ նրա ստեղծագործությունները անգին մարգարիտներ են։

<<Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը>>,- ասել է Թումանյանը։ Այդ պատճառով էլ բանաստեղծն իր գրական գործը մի կողմ է թողել և զբաղվել է ազգային-քաղաքական գործերով։ Նա ասել է, որ կոտորածներից մազապուրծ գաղթականության վշտի ու հոգսի տակ ճնշվել և ճմլվել է հայոց միտքը։ Սա վերաբերում էր նաև իրեն՝ Թումանյանին։ Պատահական չէ, որ Թումանյանը հայ գրականությունը համարել է խանգարված ժողովրդի խանգարված գրականություն։

Թումանյանի կյանքը եղել է անանձնական, անձնազոհ մի ուղի, եղել է նաև ստեղծագործական ինքնազրկում, որի ընթացքում բանաստեղծը պարտք է մնացել <<հող ու ծաղիկ տվողին>>։

Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի.

Խափան, խոպան ու անպըտուղ, անցավ առանց արդյունքի։

Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին…

Ի՛նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին։

Այստեղ բանաստեղծի խոհերն են իր արած-չարածի, անձնական վիճակի ու ապրումների մասին։ Հայրենի հողը և ժողովուրդը շատ բան են տվել իրեն, իսկ դրա փոխարեն ինքը ոչինչ չի տվել, և իր կյանքն անցել է անպտուղ և անարդյունք։ Սրանք հոգսաշատ խոհեր են իր ստեղծագործական կյանքի մասին, որ ինքը շատ բան կարող էր գրել ու չգրեց։

---

[3]Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, 1987 թ., էջ 273

Թումանյանի մարդասիրական ձգտումները հաճախ են բախվում կոպիտ իրականությանը, ուր մարդու կատարելատիպը դեռ հեռավոր նպատակ է։ Բանաստեղծը կանգնում է ժամանակակից կյանքին դեմառդեմ։ Թումանյանը

դառնացած է աշխարհի քաոսից և Աստծո պատկերը կորցրած մարդուց։ Նա տեսնում

է, որ մարդու կյանքը դուրս է եկել տիեզերական ներդաշնակությունից։ Բանաստեղծին դառնություն են պատճառում պատերազմները, նորագույն մարդակերությունը։ Որպես ճշմարիտ մարդասեր՝ Թումանյանը մաքառում է մարդու ճանապարհի համար։ Նա ըմբոստանում է դաժան աշխարհի դեմ, ուր ազգեր են ոչնչացվում։ Ուստի որոշ քառյակներում շատ ցայտուն առաջ է մղվում մարդու հարցը, ավելի ճիշտ՝ մարդակեր մարդ-գազանի հարցը.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան

Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան։

Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,

Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան։

Թումանյանը մեր այն բանաստեղծներից է, որն ավելի հաճախ է խոսում հավերժի մասին, հավերժի հետ, այսինքն՝ զրույց է բացում մեծ բնության հետ, բնության կերպարանափոխվող տարերքի շուրջ։

Շքեղ տոն է եղել բանաստեղծի ծնունդը, խառնվել են իրար լույսը, ծիածանը, ցողը, սարն ու արևը, երկինքը։ Նա ծնվել է տիեզերական սիրո ավազանում, նրան՝ բանաստեղծին, կնքել է Աստված։

Իմ կընունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,

Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան,

Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,

Ու կընքողս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ։

Բնության երևույթներից է ծնվել ու հյուսվել բանաստեղծը։ Եվ իր հերթին նա էլ, լուսավորելով աշխարհը, սեր սերմանելով, կրկին դառնում է դեպի լուսեղեն ակունքը։

Թումանյանը քառյակներում քննարկում է կյանքի հավերժական շարժման, կյանքի ու մահվան, մարդու և տիեզերքի առնչակցության հարցերը։ Արևելքի հին բանաստեղծների նման Թումանյանը տեսնում է կյանքի անընդհատ նորոգումը, ամեն օր նորից սկսվող <<հազար տարվան փորձն ու գործը>>, տեսնում է գեղեցկուհու բիբերի և բանաստեղծի հուր լեզվի վերածվելը հողի։ Կյանքի հավերժական շարժումը նա տեսնում է հին ճամփաներով գնացող ու ետ չդարձող անցորդների, մշտահունչ աղբյուրների, երազող պոետների պատկերներում։

Մահվան թեման Թումանյանի քառյակներում յուրահատուկ մեկնաբանություն ունի։ Մահը երկյուղի, դառնության, տագնապի զգացողություն չի առաջացնում։ Շանթը ասում է, որ Թումանյանը մահն ընդունում է մի կեցությունից մի այլ կեցության անցնելու ձև։ Նա կարծում է, որ Թումանյանը մահը անէացում չի համարում, քանի որ տիեզերքը անմահության տունն է։ <<Մահի ահը>> հաղթահարվում է տիեզերքի մեջ <<հալվելու, ծավալվելու>>, հետևաբար և <<ամենքի հետ լինելու>> հումանիստական տենչանքի ճանապարհին, մարդու և բնության հավերժական միասնության գիտակցությամբ։ Առողջ թե հիվանդ պահերին Թումանյանը շատ սիրում էր նայել երկնքի անհունությանը, աչքը հաճախ էր պահում լուսատուներին, այսինքն՝ հավերժի ընթացքին։ Կյանքի վերջին օրերին նա խնդրում է այնպես դնել մահճակալը, որ պատուհանից տեսնի երկինքը։

Ասի. <<Հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ…>>,

Երբ ճառագեց անծայրածիր քո ժըպիտը հոգուս դեմ,

- Ի՜նչ է աճյունն էդ անկայուն, ու անունը, որ ունես,
  Դու աստվա՜ծ ես, դու անհուն ես, անանուն ես ու անես…

Թումանյանը անպետական երկրի պետական գործիչ էր, նա ամենայն հայոց բանաստեղծ էր, ում հոգին տառապելով լող էր տալիս հայոց վշտի մեծ ծովի մեջ։ Սակայն նա խավարի մեջ լույս տեսավ, ա՜յն կյանքում, որ միայն վիշտ ու ցավ էր տվել իրեն՝ թե՛ ազգային, թե՛ անձնական։ Նա մոմի նման հալվեց, որ լույսը շատանա։

Քանի՜ ձեռքից եմ վառվել,

Վառվել ու հուր եմ դառել,

Հուր եմ դառել՝ լույս տըվել,

Լույս տալով եմ ըսպառվել։

Եզրակացություն

Քառյակները գմբեթի նման ավարտում և պսակում են Թումանյանի ստեղծագործությունների անձեռակերտ տաճարը։ Թումանյանի ստեղծագործական կյանքի վերջին շրջանի գրական-փիլիսոփայական որոնումների հիմնական ծանրությունը կրում են քառյակները։ Քառյակները փոքրածավալ, բայց կատարյալ ստեղծագործություններ են։ Թումանյանը փորձում է մի քանի տողի մեջ ամփոփել մարդկային կյանքի ողջ ընթացքը, սերունդների հավերժական երթը։ Նա փորձում է հասկանալ ծնունդի ու մահվան սահմանագծերի մեջ տառապող մարդուն, ում <<Կյանքն հոսում է տիեզերքում զնգալեն>>։

Քառյակների մեջ զանազան կողմերից բացվում է բանաստեղծ անհատի հարուստ աշխարհը, ուր կորուստների ցավին հաճախ է միանում լուսավոր հայացքը աշխարհի ու մարդու նկատմամբ։ Տառապանքի ու դառնությունների մեջ նա մի պայծառ ժպիտ է պահում մարդկանց, արևի պես շողում է բոլորի վրա՝ լույսով ողողելով աշխարհը։

Թումանյանը հայ ժողովրդի ամենասիրելի գրողներից մեկն է, պատճառն այն է, որ նրա արվեստը գալիս է ժողովրդից և ժողովրդականից։ Թումանյանը ասում է, որ արվեստը պետք է լինի աչքի նման պարզ և աչքի նման բարդ։ Նրա գործերը հենց այդպիսին են։ Նրա ստեղծագործությունները նման են հորիզոնի, որը թեև դիտողին մոտ է թվում, բայց իրականում շատ հեռու է, և որքան մոտենում ես, այնքան հեռանում է։ Ամեն անգամ նրա ստեղծագործությունները վերընթերցելիս նոր գույներ, նոր մտքեր, նոր հույզեր ես գտնում։ Սրա մասին շատ դիպուկ է ասում Համո Սահյանը. <<Ամեն անգամ նրա ստեղծագործական աշխարհի դուռը բացելիս և ներս մտնելիս զարմանում ու մոլորվում եմ. . . Այս որքան գույներ, համեր, անդունդներ ու գագաթներ կան, որ մինչև հիմա չեմ տեսել. . . >>։

Թումանյանի քառյակներում բաբախում են տիեզերական շարժման զարկերը, և զգացվում է մեծ բնության շունչը։ Եվ այդ տիեզերքի ու բնության մեծ գիտակը իրավացիորեն գրում է. <<Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին>>։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հ.1, Երևան, 1985 թ.
2. Հ. Թումանյան, Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1985 թ.
3. Հրանտ Թամրազյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1995 թ.
4. Լ. Հախվերդյան, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 2000 թ.
5. Ն. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Երևան, 1987 թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------էջ 2
2. Թումանյանի քառյակները----------էջ 3

2. 1 Հովհաննես Թումանյանի քառյակների տաղաչափությունը----------էջ 3

2. 2 Թումանյանի քառյակների բովանդակությունը----------էջ 5

3. Եզրակացություն----------էջ 12
4. Օգտագործված գրականության ցանկ----------էջ 14
5. Բովանդակություն----------էջ 15